ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

<u>ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ</u>

ԲՈՂՈՔԻ ՆԵՐԿԱՅԱՑՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Բողոքի ծածկագիրը և ամսաթիվը՝ ԳԲՔԱ-ԼՕ-2021/98, 12.10.2021թ.

Բողոք բերող անձ՝ «Ինտերմեդ Գրուպ» ՍՊԸ

Պատվիրատու՝ ՀՀ պաշտպանության նախարարություն

Գնման ընթացակարգի ծածկագիրը՝ «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-21-9/34» գնանշման հարցում

Գնման առարկան՝ բժշկական սարքի ձեռքբերում

Բողոքի պահանջը՝ պարտավորեցնել «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-21-9/34» գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովին՝

1. դադարեցնել 25.09.2021թ.-ի ժամը 14:30 տեղի ունեցած նիստի թիվ 3 արձանագրությամբ կայացված «Դավիթ Թումանյան Գագիկի» Ա/Ձ-ի հայտը բավարար գնահատելու մասին որոշումը, «Դավիթ Թումանյան Գագիկի» Ա/Ձ-ին ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը, պայմանագիր կնքելու մասին որոշումը, և/կամ
2. ընդունել «Դավիթ Թումանյան Գագիկի» Ա/Ձ-ի հայտը անբավարար գնահատելու և մերժելու մասին որոշում, ն/կամ,
3. «Ինտերմեդ Գրուպ» ՍՊԸ-ին ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշում:

ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ՝ Լ. ՕՀԱՆՅԱՆ

ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ Ռ. ՄԿՐՏՉՅԱՆ

Նիստերին կարելի է առցանց հետևել https://www.e-gov.am/gnumner/ **հղումով**.

Տեղեկացնում ենք, որ «Գնումների մասին» ՀՀ օրենքի՝

- 50-րդ հոդվածի 10-րդ մասի համաձայն՝ յուրաքանչյուր անձ, որի շահերը խախտվել են կամ կարող են խախտվել բողոքարկման հիմք ծառայած գործողությունների արդյունքում, իրավունք ունի մասնակցելու բողոքարկման ընթացակարգին՝ մինչև բողոքի վերաբերյալ որոշում ընդունելու ժամկետը գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ներկայացնելով համանման բողոք: Նույն հոդվածի համաձայն՝ բողոքարկման ընթացակարգին չմասնակցած անձը զրկվում է գնումների հետ կապված բողոքներ քննող անձին համանման բողոք ներկայացնելու իրավունքից,
- 51-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ներկայացված բողոքն ինքնաբերաբար կասեցնում է գնման գործընթացը՝ նույն օրենքի 50-րդ հոդվածի 9-րդ մասով նախատեսված հայտարարությունը հրապարակվելու օրվանից մինչև բողոքարկման վերաբերյալ ընդունված որոշման՝ տեղեկագրում հրապարակման օրը ներառյալ:

ՀՀ գնումների հետ կապված

բողոքներ քննող անձին

հասցե՝ *ՀՀ, ք. Երևան, Մելիք Ադամյան 1*

Բողոք բերող՝ *«ԻՆՏԵՐՄԵԴ ԳՐՈՒՊ» ՍՊԸ*

ՀՎՀՀ՝ *02621803*

հասցե՝ *ՀՀ, ք. Երևան, Մարգարյան փող. 37, տարածք 131*

տնօրեն՝ *Արման Դիլանյան*

հեռ՝ *+374 10 39 99 94, +374 99 19 00 98*

էլ. փոստ՝ *intermedgroup@inbox.ru*

Պատվիրատու՝ *ՀՀ պաշտպանության նախարարություն*

հասցե՝ *ք. Երևան, Բագրևանդի 5*

Գնման ընթացակարգի ծածկագիրը և առարկան՝

Բժշկական սարքի ձեռքբերման նպատակով հայտարարված

թիվ «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-21-9/34» ծածկագրով գնանշման հարցում

Բ Ո Ղ Ո Ք

/թիվ ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-21-9/34 գնման ընթացակարգի վերաբերյալ/

ՀՀ պաշտպանության նախարարությունը (այսուհետ նաև՝ Պատվիրատու) իր կարիքների համար բժշկական սարքի ձեռքբերման նպատակով 15.09.2021 թվականին հայտարարել է թիվ «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-21-9/34» գնանշման հարցման ընթացակարգ (այսուհետ նաև՝ ընթացակարգ):

Գնման ընթացակարգի հրավերի տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցով սահմանվել է հետևյալը. «Լապարասկոպիկ վիրաբուժության հավաքածու 4K թույլատվությամբ.

Լրակազմում՝

1. Էնդոսկոպիկ տեսախցիկի ինտեգրալ թվային բլոկ - 1 հատ

2. Լույսի աղբյուր - 1 հատ

3. 4K տեսախցիկի գլխիկ - 1 հատ

4. Բժշկական մոնիտոր - 1 հատ

5. Կոշտ օպտիկա ապակյա ոսպնյակներով (4K-ի համար) - 1 հատ

6. Էլեկտրոնային իտուֆլյատոր - 1 հատ

7. Ֆիբրոթելային, հատուկ ջերմակայուն մալուխ՝ բարձր լուսաթողունակությամբ - 1 հատ

8. Գործիքային կայան - 1 հատ

9. Մոնիտորի բռնիչ - 1 հատ

10. Լապարասկոպիկ պոմպ - 1 հատ

Էնդոսկոպիկ տեսախցիկի ինտեգրալ թվային բլոկ՝

Պետք է լինի համատեղելի 4K, 3D բլոկների, 2D FULL HD 3 –չիպային գլխիկների և ճկուն էնդոսկոպի բլոկի հետ,

Առավելագույն հորիզոնական թույլատրելիությունը՝ առնվազն 3840 պիքսել,

Առավելագույն ուղղահայաց թույլատրելիությունը՝ առնվազն 2160 պիքսել,

Աճող սքանավորման ֆունկցիայի առկայություն,

Առնվազն 4x3G-SDI (4K), 3G-SDI (Full HD) տեսաելքերի առկայություն,

Ինտեգրացվող հենակին միացման հնարավորության առկայություն,

Կարևոր անատոմիական կառուցվածքների հստակության մեծացման ինտելեկտուալ ռեժիմի առկայություն,

Հյուսվածքների շերտերի դիֆերենցման, նեոպլաստիկ պրոցեսները փուլերի բաժանելու և անոթային հոսքի վիզուալիզացման համար նախատեսված Էնդոսկոպիկ պատկերի սպեկտրի տեղաշարժի ռեժիմի առկայություն,

Ֆլյուորեսցետիկ հետազոտությունների ռեժիմի ապահովման առկայություն,

Ֆոտո, վիդեո տվյալների գրանցման և լրացուցիչ սարքերի (ստեղնաշար, տպիչ) միացման համար նախատեսված USB մուտքի առկայություն,

Ձայնագրման Full 4K որակի ապահովման առկայություն:

Լույսի աղբյուր՝

Ստերիլ զոնայից ղեկավարման և նրա չափանիշների հեռակառավարման համար նախատեսված ղեկավարման բլոկի առկայություն,

Ինտենսիվ լուսային հոսքի հեռակառավարման հնարավորությամբ կառավարման սենսորային TFT դիսպլեյի առկայություն,

Լամպի տեսակը՝ լուսադիոդային, լույսի հզորությունը՝ առնվազն 175 Վտ քսենոնային լամպին համարժեք,

Միացման ժամանակ սարքի ինքնաթեսթավորման ֆունկցիայի առկայություն,

Ինտեգրված բլոկի հարկադիր օդավոխման համակարգի առկայություն,

Պլանավորված պացիենտների տվյալների ներմուծման և հիշողության ռեժիմի առկայություն:

4K տեսախցիկի գլխիկ

Առնվազն 3 ծրագրավորվող կոճակների առկայություն,

Պարֆոկալօպտիկական խոշորացման հնարավորության առկայություն,

CMOS սենսորի առկայություն,

Առավելագույն հորիզոնական թույլատրելիությունը՝ առնվազն 3840 պիքսել,

Առավելագույն ուղղահայաց թույլատրելիությունը՝ առնվազն 2160 պիքսել,

Աճող սքանավորման ֆունկցիայի առկայություն,

Պատկերի թվային մշակման ներկառուցված բլոկի առկայություն,

Էնդոսկոպիկ պատկերի հստակության ուժեղացման ռեժիմի առկայություն,

Հյուսվածքների շերտերի դիֆերենցման, նեոպլաստիկ պրոցեսները փուլերի բաժանելու և անոթային հոսքի վիզուալիզացման համար նախատեսված էնդոսկոպիկ պատկերի սպեկտրի տեղաշարժի ռեժիմի առկայություն,

Քաշը ոչ ավել քան 300գ,

4K տեսախցիկի գլխիկը ավտոկլավով մանրեազերծման հնարավորության առկայություն:

Բժշկական մոնիտոր՝

4K ստանդարտի առկայություն,

Անկյունագծի չափը առնվազն 31 դույմ,

Առավելագույն հորիզոնական թույլատրելիությունը՝ առնվազն 3840 պիքսել,

Առավելագույն ուղղահայաց թույլատրելիությունը՝ առնվազն 2160 պիքսել,

Էկրանի կողմերի հարաբերակցությունը՝ 16:9,

Էկրանի հորիզոնական տեսադաշտը առնվազն 170 աստիճան,

Էկրանի ուղղահայաց տեսադաշտը առնվազն 170 աստիճան,

4K/UHD ելքեր: Quad-Link SDI (4x3G-SDI), Display Port 1/2, HDMI 1.4b,

FULL HD մուտքեր: DVI-D, 3G-SDI:

Կոշտ օպտիկա ապակյա ոսպնյակներով (4K-ի համար)՝

Տեսազննման (դիտման) անկյունը՝ 30 աստիճան,

Ներկառուցված ապակե-թելային գունանշված լուսատարի առկայություն,

Տրամագիծը՝ 10մմ,

Երկարությունը՝ առնվազն 310մմ,

Ավտոկլավով մանրեազերծման հնարավորության առկայություն,

Օպտիկայի դիստալ հատվածի վրա սադափե կամ համարժեք չքերծվող ապակու առկայություն:

Էլեկտրոնային իռուֆլյատոր՝

Ստերիլ զոնայից վիրահատարանում աղապտացիային օժանդակելու համար նախատեսված կենտրոնացված ղեկավարման բլոկի առկայություն,

Գազի հոսքի առավելագույն արագությունը՝ առնվազն 45 լ/րոպե,

Ճնշման կարգավորվող առավելագույն ցուցանիշը՝ առնվազն 25 մմ. սնդ.սյուն,

Ներվորովայնային ճնշման մշտադիտարկման և ավելցուկ ճնշումի բաց թողնելու համար նախատեսված ներկառուցված անվտանգության ավտոմատ համակարգի առկայություն,

Տեսա- և ձայնա- ազդանշանային ազդարարման համակարգի առկայություն,

Ներվորովայնային ճնշման փաստացի թվային ցուցանիշների դիտարկման հնարավորության առկայություն,

Ինսուֆլյացիայի ներորովայնային ճնշման առավելագույն ցուցանիշը՝ առնվազն 25 մմ. սնդ.սյուն,

Քաշը՝ ոչ ավել քան 10կգ:

Ֆիբրոթելային, հատուկ ջերմակայուն մալուխ՝ բարձր լուսաթողունակությամբ՝

Տրամագիծը՝ 4,25 մմ,

Երկարությունը՝ առնվազն 3մ:

Գործիքային կայան՝

Կոմպակտ սայլակ՝ բարձր դիմացկունության պլաստիկից կամ համարժեք այլ նյութից,

Լուսային ինդիկացիայով կենտրոնական անջատիչի առկայություն,

Անիվները՝ հակաստատիկ, առնվազն 4 հատ,

Սարքավորումների համար նախատեսված դարակների քանակը՝ առնվազն 4,

Լրացուցիչ սարքավորումների ամրացման համար նախատեսված առնվազն 2 կողային ռելսերի առկայություն,

Տեսախցիկի բռնիչի առկայություն,

Ստեղնաշարի համար նախատեսված դուրս քաշվող դարակի առկայություն,

ՀԲ մոնիտորի ամրացման համար բռնիչների առկայություն,

220Վ առնվազն 12 վարդակի համար ընդհանուր տումբլերով տրանսֆորմատորի առկայություն,

Առավելագույն ելքային հզորությունը առնվազն 1800Վտ,

Դարակները ըստ բարձրության վերակարգավորելու հնարավորության առկայություն,

Օդ/ջուր տարայի համար նախատեսված բռնիչի առկայություն,

Մալուխների համար բռնիչի առկայություն,

Աշխատանքային կայանի տեղաշարժման համար բռնակների առկայություն,

Վերևի դարակի բեռնատարողությունը առնվազն 20կգ,

Միջանկյալ դարակների յուրաքանչյուրի բեռնատարողությունը առնվազն 30կգ,

Հիմնական վահանակի (ներքևի դարակ) բեռնատարողությունը առնվազն 35կգ,

Խորությունը առնվազն 650մմ,

Լայնություն առնվազն 650մմ,

Բարձրությունը 1400-1800մմ,

Էլեկտրասնուցումը ստանդարտ քաղաքային ցանցից 220+/-10% Վ, 50Հց.

Քաշը (ներառյալ տրանսֆորմատորը) ոչ ավել քան 100կգ:

Մոնիտորի բոնիչ՝

Բարձրության կարգավորման հնարավորության առկայություն,

Պտտման անկյունը 360 աստիճան,

Առավելագույն ծանրաբեռնվածությունը առնվազն 12կգ,

Լապարասկոպիկ պոմպ՝

Առավելագույն բացասական ներծծման ճնշումը՝ առնվազն 60 ԿՊԱ,

Առավելագույն պոմպի ճնշումը առնվազն 450 մմ. սնդ. սյուն,

Առավելագույն իրիգացիան առնվազն 2 լ/րոպե,

Էլեկտրասնուցումը ստանդարտ քաղաքային ցանցից 220+/-10% Վ, 50Հց.:

Լրակազմը պետք է իր մեջ ներառի բլոր անհրաժեշտ հավելյալ մասեր՝ մալուխներ, միացման խողովակներ, ֆիլտրեր, որոնք կապահովեն սարքերի ճշգրիտ աշխատանքը:

Մատակարար կազմակերպությունը սարքը պետք է տեղադրի և հանձնի շահագործման՝ սարքը շահագործող կազմակերպությանը (հաստատությանը)՝ ներառյալ սարքի կարգաբերում և փորձարկում:

Երաշխիքային ժամկետը՝ ապրանքը պատվիրատուի կողմից ընդունվելու (շահագործման հանձնելու) օրվա հաջորդող օրվանից առնվազն 365 օրացուցային օր:»:

Նույն հավելվածով սահմանվել է նաև, որ

«Ծանոթություն.

Չափման միավորը՝ հատ, վերաբերում է տեխնիկական բնութագրում նկարագրված սարքերի և բաղկացուցիչ մասերի ամբողջությանը:

1.Ապրանքը պետք է ունենա.

1.1 Բժշկական սարքերին և սարքավորումներին՝ շահագործման համար տրված արտադրության անվտանգության և որակի վերահսկման միջազգային հավաստագիր:

1.2 Արտադրող կազմակերպության (կամ արտադրողի պաշտոնական ներկայացուցչի)՝ կողմից տվյալ ապրանքի համար տրված համապատասխանության և (կամ) որակի հավաստագիր:

2. Մատակարարման վայր սահմանել՝ ք. Երևան, Մուրացան 115, Կենտրոնական կլինիկական զինվորական հոսպիտալ

3. Ապրանքը պետք է լինի նոր և չօգտագործված:

4. «Գնումների մասին» ՀՀ օրենքի 13-րդ հոդվածի 5-րդ կետի պահանջներով ցանկացած հղման դեպքում կիրառել «կամ համարժեք» բառերը:

*թիվ 1.1 և 1.2 կետերով պահանջվող հավաստագրերի պատճենները ներկայացվում են ապրանքների մատկարարման ժամանակ:

Գնման ընթացակարգի շրջանակում հայտ են ներկայացրել նաև «ԴԱՎԻԹ ԹՈՒՄԱՆՅԱՆ ԳԱԳԻԿԻ» ԱՁ-ն և «ԻՆՏԵՐՄԵԴ ԳՐՈՒՊ» ՍՊ ընկերությունը:

ԱՁ-ի կողմից գնման ընթացակարգի շրջանակում ներկայացված հայտը գնահատվել է բավարար և ճանաչվել է ընտրված մասնակից, որը փաստվում է գնման ընթացակարգի հանձնաժողովի 25.09.2021 թվականի թիվ 3 արձանագրության 4.1 կետով:

Նշված որոշման արդյունքում 07.10.2021-ից սահմանվել է անգործության ժամկետ 5 օրացուցային օր ժամկետով, մինչև՝ 12.10.2021-ը ներառյալ:

Գնման ընթացակարգի մասնակից «ԴԱՎԻԹ ԹՈՒՄԱՆՅԱՆ ԳԱԳԻԿԻ» ԱՁ, նույն գնման ընթացակարգի հրավերով սահմանված Հավելված N 2-ի համաձայն ներկայացրել է ներկայացվել է հրավերի պահանջների խախտմամբ: Մասնավորապես՝ ԱՁ-ն գնային առաջարկում լրացրել է ԱԱՀ-ը տողը, սակայն հրավերով նախատեսված բժշկական սարքը ըստ ԵԱՏՄ կանոնակարգերի ազատված է ԱԱՀ-ից: Որպես նշվածի ապացույց Ընկերությունը բողոքի քննության ընթացում կներկայացնելի համապատասխան փաստաթղթերը:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի Օրենքի 34-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ **եթե մասնակիցը տվյալ գործարքի գծով պետական բյուջե պետք է վճարի ավելացված արժեքի հարկ, ապա գնային առաջարկում առանձին տողով նախատեսվում է այդ հարկատեսակի գծով վճարվելիք գումարի չափը**: Ընդ որում,

մասնակիցների գնային առաջարկների գնահատումն ու համեմատումն իրականացվում են առանց սույն մասում նշված հարկի գումարի հաշվարկման:

Գնման ընթացակարգի հրավերի 5.2-րդ կետի համաձայն՝ մասնակիցը գնային առաջարկը ներկայացնում է արժեք (ինքնարժեքի և կանխատեսվող շահույթի հանրագումարը) և ավելացված արժեքի հարկ ընդհանրական բաղադրիչներից բաղկացած հաշվարկի ձևով: Արժեքի բաղադրիչների հաշվարկ՝ բացվածք կամ այլ մանրամասներ չեն պահանջվում և ներկայացվում: **Եթե մասնակիցը տվյալ գործարքի գծով Հայաստանի Հանրապետության պետական բյուջե պետք է վճարի ավելացված արժեքի հարկ, ապա ներկայացվող գնային առաջարկում առանձնացված տողով նախատեսվում է այդ հարկատեսակի գծով վճարվելիք գումարի չափը**:

ՀՀ հարկային օրենսգրքի 64-րդ հոդվածի 2-րդ մասի 12-րդ կետի համաձայն՝ ԱԱՀ-ից ազատվում են Օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հետևյալ գործարքներն ու գործառնությունները.

12) դոնորային արյան և դրա բաղադրամասերի, մայրական կաթի, պրոթեզաօրթոպեդիկ պարագաների, բժշկական տեխնիկայի և բժշկական նշանակության ապրանքների օտարումը, բժշկական կազմակերպություններում բժշկական օգնության և սպասարկման շրջանակներում պացիենտների պատրաստած ապրանքների օտարումը, աշխատանքների կատարումը, ծառայությունների մատուցումը: Սույն կետով սահմանված արտոնությունների կիրառության շրջանակը սահմանում է Կառավարությունը:

ՀՀ կառավարության 5 հոկտեմբերի 2017 թվականի թիվ 1317-Ն որոշման հավելվածի 3-ի 5-րդ կետի 2-րդ ենթակետի համաձայն՝ բժշկական տեխնիկա են համարվում դեղերի պատրաստման, բուժման, ախտորոշիչ հետազոտությունների անցկացման, վերականգնողական բուժման և այլ բնույթի բժշկական օգնության ու սպասարկման ծառայություններ իրականացնելու համար անհրաժեշտ բժշկական հատուկ և օժանդակ ապարատները, գործիքները, տրանսպորտային միջոցները, սարքերը և այլ սարքավորում: Ավելացված արժեքի հարկից ազատման արտոնության կիրառության նպատակով բժշկական տեխնիկային դասվում են՝

2) ներմուծվող այն տեխնիկան և սարքերը, որոնց ուղեկցող փաստաթղթերում (տեխնիկական անձնագիր, հաշվարկային և բեռնառաքման այլ փաստաթուղթ) նշված է, որ դրանք նախատեսված են բժշկական օգնության և սպասարկման համար:

Գտնում ենք, որ ՀՀ պաշտպանության նախարարության «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-21-9/34» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից խախտվել է «Գնումների մասին» ՀՀ օրենքի Օրենքի 34-րդ հոդվածի 1-ին և 3-րդ մասերը, քանի որ ԱՁ-ն տվյալ գործարքի գծով ՀՀ պետական բյուջե չի վճարելու ԱԱՀ-ի գումարը, հետևաբար թիվ 2 հավելվածը՝ գնային առաջարկը ներկայացնել է «Գնումների մասին» ՀՀ օրենքի վերոնշյալ հոդվածների խախտմամբ:

Գնումների մասին ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ Գնումների գործընթացը հիմնվում է հետևյալ սկզբունքների վրա.

1) գնման գործընթացի միասնական կանոններով մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային և ոչ խտրական հիմունքներով կազմակերպում.

2) պայմանագրի կնքման նպատակով մասնակիցների շրջանակի ընդլայնում և նրանց միջև մրցակցության խրախուսում.

3) ցանկացած անձի համար, անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից, գնման գործընթացին մասնակցելու իրավահավասարություն:

Մասնակիցների հայտերի մերժման արդյունքում կպահպանվի «ԻՆՏԵՐՄԵԴ ԳՐՈՒՊ» ՍՊ ընկերության «Գնումների մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածով նախատեսված գնման գործընթացին մասնակցելու սկզբունքները:

Բողոքներ քննող անձի ուշադրությանն են ուզում հրավիրել վերջինիս վարույթում քննված նմանատիպ որոշում ԳԲՔԱ-ՆԳ-2020/108 ծածկագրով՝ որպես ապացույց սույն բողոքի:

«ԻՆՏԵՐՄԵԴ ԳՐՈՒՊ» ՍՊ ընկերությունը առաջնորդվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի ԲԱԺԻՆ 6-ով (գնումների գործընթացի բողոքարկումը), գնումների հետ կապված բողոքներ քննող անձին խնդրում է պարտավորեցնել ՀՀ պաշտպանության նախարարության բժշկական սարքի ձեռքբերման նպատակով

15.09.2021 թվականին հայտարարված թիվ «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-21-9/34» գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովին.

1. դադարեցնել 25.09.2021 թվականի ժամը 14:30 տեղի ունեցած նիստի N 3 արձանագրությամբ կայացված «ԴԱՎԻԹ ԹՈՒՄԱՆՅԱՆ ԳԱԳԻԿԻ» ԱՁ-ի հայտը բավարար գնահատելու մասին որոշումը, «ԴԱՎԻԹ ԹՈՒՄԱՆՅԱՆ ԳԱԳԻԿԻ» ԱՁ-ին ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը, պայմանագիր կնքելու մասին որոշումը, և/կամ

2. ընդունել «ԴԱՎԻԹ ԹՈՒՄԱՆՅԱՆ ԳԱԳԻԿԻ» ԱՁ-ի հայտը անբավարար գնահատելու և մերժելու մասին որոշում, և/կամ

3. «ԻՆՏԵՐՄԵԴ ԳՐՈՒՊ» ՍՊ ընկերությանը ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշում:

Կից Ձեզ եմ ներկայացնում.

1. «ԻՆՏԵՐՄԵԴ ԳՐՈՒՊ» ՍՊ ընկերության տնօրենի անձնագրի և պետական ռեգիստրի վկայականի պատճենները.

2. «ԴԱՎԻԹ ԹՈՒՄԱՆՅԱՆ ԳԱԳԻԿԻ» ԱՁ-ի կողմից ներկայացված գնային առաջարկը.

3. Բողոքարկման վճարը հավաստող փաստաթղթի պատճենը:

12.10.2021թ.

«ԻՆՏԵՐՄԵԴ ԳՐՈՒՊ» ՍՊ ընկերության
տնօրեն՝ Ա. Դիլանյան